


տալ մի կարգաւորեալ ծրագիր, այլ ցանկացայ միմիայն մատնացոյց անել, թէ ինչ ձևով կարելի է նպաստել մեր դպրոցների բարեկարգմանը, դո՛ւնէ մի կողմից:

Պ. ԷՊԻԼԵԱՆ.



ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Պրոֆ. Էրնստ Մէյմանի «Դասախօսութիւններ փորձնական մանկավարժութեան մասին» ուսերէն թարգմանութիւնից հիւսեց

Pessimist.

Մի քանի խօսք հիւսողի կողմից

Չնայելով Կովկասահայերիս դպրոցներից մի քանիսը չուտով բոլորելու են իրենց գոյութեան հարկւրամեակը, այնուամենայնիւ մինչև այժմ՝ չունենք ոչ միայն կանոնաւոր, օրինակելի դպրոցներ, ծրագիրներ, այլ և մատների վրայ կարելի է հաշուել մեր քիչ թէ շատ պատրաստուած մանկավարժներին: Ինչ վերաբերում է մանկավարժական գրականութեանը, մեզանում այս կողմը յատկապէս անմխիթար պատկեր է ներկայացնում. զարմանալիօրէն որքան և տնտեսական օրէնքի հիման վերայ պահանջի համեմատ պէտք է լրացնող միջոցների արտադրել, այս դէպքում մեզանում այս օրէնքն էլ չի գործադրւում. դպրոցներ մենք ունեցել ենք և ունենք բաւական թիւով, դասատուներն էլ չեն պակասել, սակայն վերջիններս մեծ մասամբ միջնակարգ կրթութեան տէր մարդիկ լինելով, զուրկ են եղել տարրական մանկավարժական կրթութիւնից. ամեն մէկը երկար տարիներ աշխատելուց յետոյ հազիւ սեփական փորձի շնորհիւ որոշ հմտութիւն է ձեռք բերել. իսկ թէ մինչև փորձ ձեռք բերելը քանի սերունդ իւր անփորձութեանը զոհել, այդ մասին խօսելն աւելորդ

է. Անշուշտ մեր դպրոցների դրութիւնը նմանէ ուղտի մարմնին, որի ոչ մի տեղը ուղիղ չէ, ինչ փաստ ուրեմն, որ վիզն էլ ծուռ է, սակայն մեր մանկավարժները կարող էին իրենց պատրաստութեան և փորձառութեան շնորհիւ թէ համապատասխան ուղեցոյցներ կազմել, թէ գոնէ մի լուրջ մանկավարժական թերթ հրատարակել, ուր որ հայ վարժապետը կարողանար թէ Լրոպական մանկավարժ գիտնականների ուսումնասիրութիւնների հետ ծանօթանալ, թէ իւր փորձի արդիւնքները տպագրութեան տալ. հայ դպրոցի կեանքը կպատկերանար այդտեղ, նրա լաւ ու վատ կողմերը, և մեր սկսնակ ուսուցիչները անշուշտ մեծ օգուտ կստանային, նախ քան դասարան մտնելը, առաջուց ծանօթանալով դպրոցի ընդհանուր դրութեան հետ, օգտուելով իրենցից աւելի աւագների ու փորձառուների հետազօտութիւններից:

Մեզանում մեծ մասամբ աշխատել են մի կողմից նորու նորագոյն մեթոդներով դասագրքեր կազմել, միւս կողմից ծրագրները փոխել ժամանակի ոգու համեմատ, թէև գործադրելու մասին շատ էլ չեն մտածել, բաւական է որ ծրագիրը նորագոյնն է. ենթադրում է, որ դասատուն էլ նորագոյն կլինի և նորագոյն մեթոդով կգործադրի. Եւրոպայից օրինակ առնելը ամեն բանում մեզանում համարում է ամենալաւ ու օրինակելի գործունէութեան եղանակը, սակայն ինչո՞ւ այս դէպքում էլ այդ օրէնքը չի պահպանուել, Եւրոպական տարրական, թէ միջնակարգ և թէ բարձրագոյն դպրոցները օրինակելի են իրենց կազմակերպութեամբ. յատկապէս գերմանական տարրական ուսումնասիրանները այժմ ուսումնասիրութեան առարկաներ են և պէտք է որ մեր մանկավարժները մեզ ծանօթացնէին նրանց կազմութեան հետ. բայց մեր համալսարանականները կամ համալսարանի երես տեսնողները անպայման աշխատում են ինքնուրոյն բան տալ, թարգմանել, հիւսել նրանց պատիւ չի բերում. ուստի և ոչ իրենք են մի աչքի ընկնող աշխատութիւն տալի, ոչ էլ ծանօթացնում են օտարազգի հռչակաւոր հեղինակների գլխաւոր աշխատութիւնների հետ:

Դպրոցներից իր կազմութեամբ ամենից բարձր տարրական, կամ ինչպէս մենք ասում ենք, ծխական դպրոցն է, ուր որ կրթւող, դաստիարակող սերունդը նոր սկսում է մի նոր կեանք, հետզհետէ վարժւում է գրին, կարգ ու կանոնին, իսկ ամեն բանի սկիզբն է դժուար։ Մեզանում նորերս էլ նոյնիսկ, մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ առարկաների նիւթերը թէ որակի, թէ քանակի տեսակէտից շատ անհամապատասխան են կազմուած տարրական դպրոցի դասընթացքը ինկատի ունենալով, պարզ գիտենք, որ այդ ծրագիրը լոկ նմանողութիւն է օտար դպրոցների ծրագրերին և տեսական դատողութիւնների արդիւնք։ Մանկավարժ անունը կրող ամեն մէկը կխօստովանի, որ իւրաքանչիւր տեղ, միջավայր ունի իւր յատուկ պայմանները, որոշ բարոյական և դրական կողմերը, որոնք անհրաժեշտօրէն պէտք է ինկատի առնուին դպրոցի ծրագիր կազմելու դէպքում։ Անշուշտ այն, ինչ որ գերմանացի, ռուս, ֆրանսացի մանուկին մատչելի է, այն, ինչ որ նա կարողէ անել և ընդունակ է ըմբռնելու, այդ նոյնը նոյն ձևով ու չափով հայ մանուկին մատչելի չէ, հետևապէս ընդօրինակել գերմանական տարրական դպրոցի ծրագիրը որոշ յաւելումներով ու կրճատումներով կնշանակի հայ դպրոցը գերմանական ոգով առաջ տանել և ոչ հայկական։ Հայ մանկավարժները պարտաւոր են առտեղեաւն ուսումնասիրել հայ մանկան հոգեբանութիւնը, ընդունակութիւնները, որոշել իր աստիճան պատրաստութիւն ունի դպրոց մտնելու ժամանակ, ինչ հակումներ ունի, հայ դպրոցը ինչ նպատակ ունի, մեր միջավայրը ինչ յարմարութիւններ և անյարմար կողմեր ունի և ըստ այնմ կազմեն ծրագիրը։ Մինչև այժմ այս մասին մեզանում կանոնաւոր ուսումնասիրութիւններ ամենեւին չեն եղել։ Եւրօպայում այս ուղղութեամբ բաւական աշխատել են և որոշ արդիւնքների հասել։ Վորձնական մանկավարժութեան համար յատուկ աշխատանոցներ, զանազան աեսակի դօրծիքներ, ուսումնասիրութեան եղանակներ վաղուց կազմուել են և արդիւնքները տպագրութեան են տուել։ Այս ուղղութեամբ

պէտք է կարգաւորել մեր ծխական դպրոցները, որոնք մեր դպրոցների հիմքերն են կազմում, թէ մտաւոր թէ բարոյական կրթութեան շնորհներն են, բնական է, որ յատուկ խնամքի առարկայ են լինելու։ Այդ կարիքը կարելի է լրացնել մեղանում էլ հետզհետէ փորձնական մանկավարժութեան մեթոդները գործադրելով նրա տուած արդիւնքներից օգտուելով։ Այս տեսակէտի ամենից յաջող գրուածքը պրօֆ. Մէյմանի աշխատութիւնն է, որը մի տեսակ ամփոփումն է մինչև այժմ փորձնական մանկավարժութեան ձեռք բերած արդիւնքների։ Խնկատի ունենալով մեր ներկայ դպրոցների վիճակը, որ տնտեսապէս ապահոված չեն և հնարաւոր չէ որոշ աշխատանոցներ կազմակերպել, փորձեր անել, գործիքներ ձեռք բերել, միւս կողմից որ չունեն պատրաստի մարդիկ, որ այս ուղղութեամբ գործեն, ես մի կողմ թողի Մէյմանի աշխատութեան մեծագոյն մասը կազմող մի որ և է խնդրի ուսումնասիրութեան զանազան եղանակների նկարագրութիւնը, մէկի կամ միւսի առաւելութիւնը և քաղեցի, հիւսեցի միայն այդ փորձերից հանած եղբակացութիւնները, որոնք ընդհանուր բնաւորութիւն ունին և կարող են այժմ հէնց մեր ուսուցիչների համար օգտակար լինել։ Այդ է պատճառը, որ ուսուցիչն թարգմանութեան դէպքում 3 հատոր մօտ 800 երես աշխատութիւնը այսքան քիչ երեսների մէջ եմ ամփոփել։ Ռուսերէն թարգմանութիւնը բաւական պարզ, կոկիկ լեզուով է կատարուած և մատչելի է, թէև հոգեբանական որոշ պատրաստութիւն պէտք է ունենալ լաւ հասկանալու համար շօշափած խնդիրները։ Մեծ մասամբ ես իմ բառերով աշխատել եմ տալ հեղինակի մտքերը, թէև երբեմն էլ բառացի թարգմանութիւններ էլ եղել են մի կամ երկու նախադասութիւնների, որ չեմ դրել չակերտներում, որովհետև արդէն ամբողջ գրուածքը մի քաղուածի հիւսուած է, ուր որ ես ոչինչ իմ կողմից չեմ ասել։

Ժամանակ է մեր դպրոցն էլ փորձնական մանկավարժութեան մեթոդներով կարգաւորելու և ինքուրոյն կեանք ստեղծելու։

(Նար.)

Pessimist.